

երբեմն կենսագրության յանգելու աստիճան: Ու զարմանալի չէ որ իր նորավէպերուն մէջ աւելի յաճախ *narration*-ներ<sup>19</sup>, դիպագրութիւններ կան քան *երեւոյթներ*, աւելի *անհատներ* են որ կը շարժին քան *տիպարներ*: Սառաներ, Տալիլաներ չէ որ կը ներկայանան, այլ *Սառա մը*, *Տալիլա մը*: Ու որքա՛ն արկածներ, «զանազան դէպքեր» նիւթ կազմեր են նորավէպի:

Ուրիշ վրիպում մը.– հրապարակագրի խորթ ջիղ մը կ'ապրի տակաւին իր շատ նորավէպերուն մէջ: Բարոյախօսութիւն, քարոզութիւն, անվե՛րջ խորհրդածութիւններ, որոնք կը խաթարէն շքեղ կերտուածք մը: Հեղինակը վարագոյրը կը վերցնէ կեանքի մէկ շատ փոքր էջին վրայ, մասնիկի մը վրայ. ինք բաներ կը տեսնէ, ինք կ'ապրի, ու կը հարցնէ ձեզի թէ դուք ալ հասկցե՞ր էք: Եւ կարծելով թէ չհասկցաք, կը սկսի *բացատրել*, *եզրակացնել*, եւ աւելի շատ՝ լուռ ցաւերն են որ այս դժբախտութեան կը գոհուին, այսինքն՝ բուն իսկ այն ցաւերը որ բացատրութեան կարօտ չեն: Երեւակայեցէք թէ ձեր դիմացն ունիք աղջիկ մը որ կը ժպտի ձեզի: Այդ ժպիտը շատ պերճախօս է ձեզի համար, ամբողջ պատմութիւն մըն է: Բայց ահա յանկարծ, մանկամարդուհին կը դառնայ ձեզի, ու կ'ըսէ. «Գիտե՞ք ինչու ժպտեցայ,– որովհետեւ... կը սիրեմ ձեզ»:

Ու այսպէս է որ, իր *Յակոբիկը*' հրաշալի դիմագծութիւն մը, կը վերջանայ արձակունակ մեկնաբանութեամբ մը.

«...Յաւը որ զինքը տարաւ, բորոտութիւնն էր՝ տարածուած այնքան մեր մէջ, եւ որուն իր առողջ նկարագիրը չտոկաց: Այդ հիւանդութիւնը կը կոչուի՝ պայմանադրական կեղծիքը ընկերութեան»:

Առէք *Արմենիսան*: Տիպար մըն է, ստոյգ գիծեր, միջավայր, հոգեբանական հանգոյց, բայց, ինչքա՞ն մեղանչում արուեստի պահանջներուն դէմ,– հասարակ միտքեր, անլորդաբանութիւն, անտեղի խորհրդածութիւններ...

«Հրաշալի տեսիլ մըն է կեանքը երբոր դիտուի այն վարագոյրին պատուածքէն զոր պատանութիւն կ'անուանեն...»